



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Դ. — ՇՐՋԱՆ ԺԷ.

1884

ՏԱՐԻ ԺԷ.


ԱՊՐԵԼ 30.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՅԱՆԿԱՐԹ ՄԵՌՆԵԼՆ Է ԼԱՒ, ԹԷ ԵՐԿԱՐ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ
ՈՒ ՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՔԱՇԵԼՈՒՅ ՅԵՏՈՅ.

Ձեր գօտիները ձեր մէջքը կապած լինին ու ձեր ճրագները վառած. նման եղէք այն մարդոցը, որ իրանց օիրոջն են սպասում, թէ երբ յետ կրգառնայ հարսանիքից, որ, երբ որ գայ ու դուռը ծեծի, շուտով բաց անեն: — Երանի այն ծառաներին, որոնց աւերը կրգայ ու արթուն կրգանի:

Սաստիկ ներգործումէ մեր վերայ յանկարծ մեռնելու լուրը մի ծանօթ մարդու, որին մի քանի ժամ առաջ, մի քանի օր առաջ տեսել էինք, խօսել էինք ու առողջ գիտէի՛նք: Սարսափ է գալիս մեր վերայ: Նա ազգուար ենք կարողանում հաւատալ մեզ հասած լուրին, այնպէս կարծելով՝ իբր թէ անկարելի բան լինի այն, ինչ որ կեանքի մէջ շատ ու շատ անգամ է պատահում. իբր թէ



Աստուած՝ կեանքի և մահուան Տէրը՝ մեզ խնայելով, բացառութիւն պիտի անէր մեզ համար ու դուրս հանէր մեզ աշխարհիւ բաների սովորական ընթացքից:

Ի՞նչն է մեր վերայ սարսափ բերում. — մեզ սարսափեցնողը մեր այն մտածմունքն է, որ մի մարդ առանց ամենայն պատրաստութեան՝ յանկարծ խլվումէ իւր գործունէութեան միջից ու իւր մտքումը դրածներն ու սարքածները անկատար են մնում: Մենք կարծես, յանկարծ մեռնող մարդու գրութեան մէջն ենք մեզ մտածում, ու զգումենք մի խուլ սարսափ յանկարծ պատահած զօրաւոր յեղափոխութեան վերայ, որ մի քանի բոսպէի մէջ մարդուն իւր ամենօրուան գործերիցը խլեց, առաւ տարաւ անձանցով աշխարհը: Մեռնողի մեզանից յանկարծ բաժանուելը՝ առանց մնաք բարեւի, առանց վերջին սիրոյ խօսքերի՝ մեր սրտին շատ է ցաւ տալիս:

Բոլորովին ուրիշ կերպ ենք զգում մտիկ տալով մեր մերձաւորի վերայ, որ օր օրի վերայ մեռնելու է մօտենում իւր հիւանդութեամբ, որ անպատճառ այն վերջը պէտք է ունենայ, որ նորան մահուան տանի: Իրաւ է, որ մենք մեր ունենալու կորուստի համար աւելի պատրաստուած ենք, բայց էլի, որ մի փոքր լաւի է գրնում հիւանդը, կամ մեզ այնպէս երեւում, էլի յոյս ենք ունենում, թէ կարելի է կրլաւանայ: Այդ յոյսն այնչափ աւելի շուտ ենք ունենում ու աւելի սրտանց ենք ցանկանում, որչափ որ այն անձը մեր սրտի համար թանկագին է, որ մեր սիրան ահ էր գրցում մեզանից բաժանուելու: Այգայիսիների մահը մեզ պակաս խոր տխրութեան մէջ չէ ձգում, թէւեւ ամեն բանն էլ սպասում էինք, որ կարող է պատահել: Իրաւ է, հիւանդը քիչ կրպատահի, որ այնպիսի ծանր նեղութեան մէջ լինի, ինչպէս որ մենք մեզ նրկարագրումենք մեզ չարչարող մեր երեւակայութեամբը, բայց ո՞վ կարող է մի ժամանակ իւր տեսած բոլորովին առողջ ու զուարթ անձի այժմ քաշուած, մաշուած երեսը, գունատուած այտերն, նուաղած ու խոր ընկած աչքերը տեսնել, ու սաստիկ կերպով չը ցաւել նորա վերայ. ո՞վ կարող է նորա հառաչանքն ու տնքանքոցը լսել, տեսնել նորա թոյլ, գթուար շունչ քաշելը, ու մտքումը չասել թէ ողորմած Աստուածը այս գրութեանը շուտով վերջ դնէր ու չարչարողին հանգստութիւն պարգևէր մահուան քնոյ մէջը:

Այսպէս սարսափեցնում է մեզ յանկարծ մահը. այսպէս տխրեցնում, վշտացնում է մեզ կամաց կամաց զէսլի մահը գնացողի վերայ նայելը:

Ի՞նչն է ուրեմն աւելի ցանկալի, եթէ որ ցանկութիւնները մի նշանակութիւն ունենային այնտեղ, ուր որ ամենայն ցանկութիւնների վերջն է գալիս հասնում. որն աւելի լաւ է, յանկարծ մեռնելը՝ թէ կամաց կամաց:

Թէեւ սկզբում մեզ այնպէս է երեւում, որ այդպիսի մի հարցմունք տալը անօգուտ մի բան է ու ոչինչ դուրս չի գալ դորանից, ինչու որ մեր մարդկային ոյժը ոչինչ չէ կարող որոշել այն բանի վերայ, ինչ որ պիտի պատահի և պատահումէ: Բայց և այնպէս՝ այդ բանի վերայ դատողութիւն անելը շատ խրատական է ամենայն մի մարդու համար. այդպիսի դատողութիւնը մինչև անգամ բարիք բերող է. ինչու որ ոչնչացնում է քանի քանի նախազաշարմունքների, որ մեր մէջը մտել են յանկարծ՝ կամ կամաց կամաց մեռնելու մասին:

Մի՞թէ սակաւ մահականացուք կան, որ՝ յանկարծ մահն ամենամեծ անբաղդութիւն են համարում, որովհետեւ կարծում են, թէ յանկարծ մեռնողը ժամանակ չէ ունենում իւր մեղքերը քաւելու և իւր մեղքերի մէջ մեռնելով, դժոխքն է գնում: — Մի՞թէ քիչ կան այնպիսի մարդիկ, որ Աստուծոյ, հէնց նորա համար են աղօթք անում, որ իրանց վրիկի յանկարծ մահից: Բայց այդպիսի կարծիքը միայն պտուղ է անարժան գաղափար ունենալուն Աստուծոյ մեծութեան ու արդարութեան վերայ: Եթէ որ յիրաւի յանկարծ մեռնելը ամեն չարիքներից աւելի զարհուրելին լինէր, ուրեմն ի՞նչպէս կարելի էր, որ Աստուած, որոյ զաւակներն ենք մենք «մէնք», որոյ ողորմութեանը մենք «մէնք» ակնկալութիւն ունինք, մի քանի մարդոց վերայ լաւ աչքով նայէր, իսկ միւսների վերայ՝ ոչ: Երբ որ երկրաշարժը, կամ մեծ հեղեղը յանկարծ հարկրաւոր ու հաղարաւոր մարդոց կեանքից զրկումէ, մի՞թէ նոցա մէջ չրկան՝ թէ՛ մեծ մեղաւորներ և թէ՛ առաքինի արդարներ: Եթէ յանկարծ մեռնելը դժոխք գնալու դատապարտութիւն լինէր, ուրեմն միլիոնաւոր մարդիկ, որ իրանց անկողնի մէջ երկար ցաւեր քաշելով, իրանց հոգին փչում են, ամենողորմած Աստուծոյ աւելի մեծ շնորհացն իրանց արժանացած պէտք է համարէին:

Այս, աստուծոն, մեղաւորը իւր մահուան անկողնի մէջը ժամանակ ունի գեռ ևս իւր շատ ու շատ յանցանքների վերայ զղջալու ու սրտովն դէպի իւր Աստուածն դառնալու: Եւ եթէ կարելի լինէր, որ ապաշխարեն իւր մահուան ժամին ամեն բան դէպի լաւը դարձնէր, հակառակ չէր լինիլ արդեօք Աստուծոյ ամենին վերայ հայրական հաւատար խնամքին ու սիրոյն, եթէ նա մի քանիսն այն բազմաւորութիւնը զլանայ, որ ուրիշներին պարգեւումէ: Հէնց մի երկրաւոր հայր, մի մարգկային մայր իրանց զաւակներին այգւոյի տի անարգարութիւն կրկաւենային անել: — Ոչ, ձեր գաղափարը գերազոյն էակի վերայ նորա համար պակասաւոր է, որ դուք սխալ գաղափար ունիք մահուան անկողնի մէջ զղջման գալու նշանակութեան վերայ: Եթէ որ չարագործը բանտի մէջ իւր մեղքերի վերայ զղջար, ստանալու պատժիցը վախենալով, դուք նորան առանց այլեայլի միւսնոյն կարգը կրգատէիք շատ բարեպաշտ և առաքինի մարդոց հետը: Մի երեխայի, որ իւր ամեն տեսակ անհնազանդութեամբը շատ տխրեցրել է ձեզ, երբոր յիւրաւի, պատժելու լինէիք, ինչպէս շատ անգամ ասել էիք իրան, վախիցը լաց լինէր ու զղջար, այնպէս կրվարձատրէիք, ինչպէս որ ձեզ միշտ հնազանդ ու աշխատասէր երեխային, որ ամեն ժամանակ ամենաքնքոյշ սիրովն դէպի ձեզ՝ ձեր կամքը կատարել է: — Արդարութեան ամեն մի զգացմունք այգւոյի տի վարմանը դէմ կըրգոյնուէր: Եւ ինչպէս կարողէք դուք արդարագոտ Աստուծոյն անարդար համարել, որ միայն դուք կարող էիք լինել: Միթէ երկիւղիցը բռնի յաւաջ եկած մի բոլեւի զղջումը կարող է հաւատար արժէք ունենալ երկար տարիներով առաքինութեամբ անցկացրած կեանքի հետ: Քրիստոս ինքն վսեմ ու ազդու կերպով զգուշացրել է մեզ այգւոյի տի սխալանքի մէջ ընկնելուց: «Նոցա պոռնիկէնց կըճանաչեմ եւ նոցա», ասում է Նա, ամեն ինձ Տէր, Տէր՝ ասողները երկնքի արքայութիւնը չեն մանիլ, «չլ սրնի սր իճ երկնիս» — Զօրս կոհիլ կըկոսարբն:

Աւրեմն յանկարծ մեռնելուցն ամենեւին վախենալ պէտք չէ՝ սարսափելի չարեքներից մինը համարելով, այգւոյի տի մահն ինչ է որ մեզ առիթ ու ժամանակ չէ տալի, որ մենք զղջանք ու մի քանի աղօթքներ ասենք: Դուք պէտք է այնպէս կատարեալ լինիք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է: Բայց այս կատարելութեանը հասնումէ մարդս, մշտապէս նուաճելով միայն իւր զգա-

յական հակումներն և ամենայն կերպ աշխատելով, որ մաքուր, սուրբ վարք ունենայ և անարատ կեանք՝ Քրիստոսի խօսքին ու հոգւոյն համեմատ: — Աւրեմն հոգս քաշիր քո ժամանակաւոր կեանքիդ մէջ ամբիժ խղճմտանք ունենալու, որ քո մահուան նեղութեան մէջ յոյս ունենաս Աստուծոյ յաւիտենական ողորմութեանն եթէ որ այս աշխարհումս քո նպատակիցդ շատ հեռու ևս մնաս, յոյսդ մի կտրել: Աւազակին անգամ, նորա սրտանց զղջումը տեսնելով՝ խաչի վերայ բարձր ձայնով ասաց Փրկիչը, «Այսօր դու ինձ հետ դրախտումը կրկնես»:

Իմաստուն մարդը շատ պատճառներ ունի թէ յանկարծ և թէ կամաց կամաց եկող մահը ցանկալի համարել. բայց երբէք պատճառ չունի մի կամ միւս տեսակ մահից վախենալու: — Քո փութելուցդ, հող գառնալուցդ մի վախենալ, թէ շուտ պատահի, թէ ուշ՝ մէկ է. թէ՛ կամաց կամաց հիւանդութիւնից ուժից ընկնելով, կամ ծերութիւնից զօրութիւնդ սակասելուց ես մեռնում՝ թէ շուտ զեռ ևս ոյժդ վերագ ու կեանքի քաղցրութիւնները վայելելուդ միջոցին՝ մի անակնկալ ու կարգէ դուրս անբաղդութիւնով: Թէև դու կարող ես առաջուանից հասկանալ քո մեռնելդ, ինչպէս որ մարդս առաջուանից գիտէ, որ երեկոյին պէտք է քնի. բայց միայն մահդ որ գայ, դու այն ժամանակը չես իմանալ, ինչպէս որ քունի գնալուդ բոլորն չես իմանում: Արոնք որ քո մեռնելդ տեսնումեն, նորա գիտեն և զող ու սարսափ է ընկնում նոցա վերայ: Դող ու սարսափ է ընկնում նորա վերայ նորա համար, որ կեանքը բնականապէս սիրելի ու քաղցր է և այդ զգացումն Աստուած ինքն է դրել կենդանի արարածների և մանուսանգ բանական մարդուս մէջ. կէանքը «կրէլ», կամ կեանքը քաղցր լինելու այդ զգացումն է, որ ոչ մի կենդանի, կամ մանուսանգ մարդ մեռնել չէ կամենում, մահուան գէժ միզոլումէ: Դու քո նուազած աչքերդ չես տեսնում, դու չես սարսափում քո դեղնած, սակորները դուրս ցցուած երեսիցդ, կամ թէ անդամներիդ սառելուցը. այս գրութիւնը միայն քո չորս կողմդ կանգնած մերձաւորներիդ երեւակայութիւնն է դարհուրելի պատկերներով միզոլում:

Մի վախենալ մեռնելուցդ, ինչու որ գիտես թէ՛ ո՛վ քեզ փրկեց. Յիսուս Քրիստոսն է քո աղատարարդ, որ քեզ երկնքի ճանապարհը ցոյց տուեց ու քեզ յայտնեց երկնաւոր Հօր կամքը: Զափաղանց վախենալը մեռնելուց ոչ միայն քրիստոնէին այլ և ոչ քրիստո-

նէին անարժան է: Պատճառն որ, այս զուր տեղն ինքն իրան տան-
ջելը՝ ցաւեր է աւելացնում մարդուս վերայ, և այնքան աւելի մեծ
ցաւ, որ մահը բնաւ չէ պատճառում: Մահից վախենալը խանգա-
րումէ մեր բանականութիւնը, զրկումէ մեզ ամեն ուրախութիւ-
նից, էլ ոչ մի բանով չենք կարողանում ուրախանալ. թէեւ ցան-
կանում ենք, բայց սիրտներս չէ բացվում, սեւացած է ու սեւացած.
բայց ուրախութիւն ասած բանդ է, որ մեր առողջութիւնն ու
կեանքը պահպանումէ մի աննդարար կերակուրի նման, որ մեզ
ոյժ է տալիս, և որով կարողանում ենք մեր կեանքը պահպանել ու
շարունակել. մի մեծ վնասն էլ, որ մեզ տալիս է, այն է, որ մեր
մարմինը թուլացնումէ այդ մեր վճատուած ու խանգարուած գրու-
թիւնն ու մեր աւելի շուտ մեռնելու պատճառ է լինում՝ բոլորո-
վին հակառակ մեր ցանկութեանն, որ մահի ձեռքից վախչել, ա-
զատուել ենք կամենում: Յայտնի է, որ սաստիկ վախենալուցն ա-
ւելի վտանգաւոր թոյն չէ կարող գտնուիլ: Այն ասած բանդ հէնց
ինքը մարդուս կեանքը յեղաշրջող ու խանգարող է: Այլ որ անդա-
դար վախումէ մահից, անդադար էլ մեռնումէ. ամեն օր էլ կար-
ծում, որ մահն եկել է, մեռնումէ. իսկ իւր մահուան ժամին չի
էլ զգալու իւր մեռնելն:

Այլ կարող է իմանալ թէ՛ ինչ մահով կրմեռնի. կարող ենք ի-
մանալ, որ յանկարծ՝ կամ կրակի մէջ կայրուենք, կամ կտրից
քար կրնկնի մեր գլխին ու կըսպանի, կամ ջրի ալիքների մէջ կը-
խեղդուենք, կամ կաթուածը մեզ կըտանի, կամ ո՛վ գիտէ, ինչ
պատահմունքով յանկարծ մեր կեանքից կըզրկուենք: — Աորա հա-
մար ասո՞ր հրաման ասո՞ր, այսինքն է. ամեն բանդ այնպէս կարգի
դիր, որ եթէ շատ էլ յանկարծ բաժանուիս քո բարեկամներիդ
շրջանիցը, քո մահիցդ յետոյ ամեն բան կարգին գտնեն, պակաս
անհասկանալի ու իմճուած բան չըմնայ: Քեզանից յետոյ ապրող-
ները գովասանքով կըխօսեն քո վերայ: Քո ընտանիքիդ քեզ օրհ-
նէնքով յիշելն յետեւիցդ կըգայ, կըհասնի մինչև յաւիտենական
կեանքն. ինչու որ, դու կատարել ես ամենասուրբ պարտականու-
թիւններիցդ մէկը քո սրտիդ համար թանկագին ընտանեացդ հա-
մար, որոց հետը կապուած էիր արեւակցութեամբ կապով: Միշտ
կարելի է ենթադրել թէ՛ ով որ իւր տան գործերի ու կառավա-
րութեան մէջ կարգ է պահպանում, իւր միւս մեծակշիւ յարա-
բերութիւնների մէջ ևս Աստուծոյ հետ ունեցած յարաբերութիւն-

ների մէջն ևս նոյնը կրլինի, և մահը նորան անպատրաստ չի գրտնիլ ու վերան յանկարծ եկած չի լինիլ. այնպէս կեանք վարիւր ու գործք այնպէս բռնիր ամեն օր, որ քո մահից յետոյ, եթէ այս ժամիս էլ յանկարծ պատահէր, ոչ քո ընտանիքդ տխրութիւն քաշի, ոչ էլ քո անուանդ ամօթ բերի ու քաշքշեն: Ինչու որ մեռնողի անունը պէտքէ լինի միշտ՝ իրանից յետոյ թողած այն պատուական բանն, որ ամենքն էլ օրհնելով յիշեն: Քո գործերդ ու ամեն բանդ այնպիսի մի կարգով, կանոնով պահիր տուած ուղղութեամբ, որ իմացուի թէ՛ դու մտածել ես միշտ, որ ամեն մի ժամ օտարների աչքի առաջ կարող եմ բացուիլ ու յայտնուիլ, ինչպէս որ մեր մեռնելուց յետոյ ամեն ժամանակ շատ կամ քիչ պատահումէ ստորաբար:

Տանդ համար պարտաւոր եմ: — Եթէ ամեն ժամանակ քո կեանքիդ մէջ անարատ ես ապրել, մարդասէր բնութիւն ես ունեցել, կռիւ, նախանձ, ատելութիւն, ռիսկալութիւն քո սրտիդ մէջը տեղ չեն ունեցել, իսկ այնպէս ես ապրել, ինչպէս որ քո Փրկիչդ, քո Յիսուս Քրիստոսը սորվեցրել է քեզ ապրել, այն ժամանակ յանկարծ մեռնելդ քեզ համար մի բարիք, մի բարերարութիւն է, որ քեզ յանկարծ հասած կրլինի: Խոչ պիտի վախենաս Աստուծոյ առաջը դուրս գալու, որ միշտ նորա աչքի առաջն ես: Դու քո ծնած օրիցդ նորա զաւակներից մէկն ես, որ քեզ Իւր ձեռքի վերայ է պահել սիրելով, աչքը վերադ է եղել ու քեզ պահպանել է: — Անշուշտ դու վախում ես նորա դատաւորական նայուածքից: Նա ճանաչում է քո սխալանքներդ. բայց և գիտէ քո սրտանց ջանք անելդ դէն գնելու քո արած պակասութիւններդ: Գիտէ նոյնպէս քո ուղիղ մտքով աշխատելը նորան արժանի լինելու համար մեղքի մէջ ընկնելու փորձանքների յաղթելդ. գիտէ, որ դու շատ անգամ քո բարկութիւնդ, ժլատութեան ու շռայլութեան հակումներդ զսպել ես ու քո մէջդ խեղդել, գիտէ, որ դու քո ամեն մի սխալ աշխատել ես աւելի լաւ գործերով ուղղել: Միթէ մի երեխայ պիտի վախենայ, երբ որ իւր ամեն սխալանքները դէն դրած ևս չլինի, իւր դէպի ինքն սիրով լցուած հօրն առաջը դուրս գալու: Միթէ Յիսուս այս Հօր անսահման ողորմութիւնը համողութեամբ խօսքերով մեզ չէ յայտնել, Միթէ մեզ չէ՞ ապահովացրել նորա գթութեան ու ողորմութեան համար, որով մեզ ներում է:

Ով որ ամեն ժամանակ Յիսուսի սիրող մտքովն է ման գալիս ամենատես ու ամենագէտ Աստուծոյ առաջը, նա Նորա երեսը որ տեսնի, չի դողայ: Յանկարծ մեռնելը մահուան ամենամեծ դառնութիւնից մեզ ազատումէ: Արտի սիրեկանների ու մօտիկ բարեկամների լացը, մեզ տանջող մտածմունքը թէ՛ ինչ խոր տխրութեան մէջ պէտք է ընկնեն մեր հեռաւորները, չէ դժուարացնում Աստուծոյ անփոխիւթի օրէնքով մեզ համար սահմանած մահն ու հեռանալը այս աշխարհից: Բայց և այնպէս մեր մահուան համար լացն ու տխրութիւնը մի դիւրագգաց սրտի համար ամենատխրաւի բանն է: որ մահը կարող է մեռնողին պատճառել: Ով է այն մարդը, որ կարողանայ առանց սիրար սաստիկ լցուելու, տեսնել իւրայնոց խոր տխրութիւնը, թէև շատ էլ ծածկել աշխատեն իւր առաջն. ով կարող է չըմբռնուել սաստիկ, երբ որ մերոնք մեզ մօտենումեն՝ վերջին անգամը՝ իւրեանց հարազատ սիրոյ վերջին զգացմունքը մեզ յայտնելու. — երբ որ նորա աղօթք անելով մեզ համար՝ խոր խոցուած սրտով՝ շրջապատում են մեր մահուան անկողինը:

Մինչև անգամ այս ու այն հանդիսաւոր պատրաստութիւնները տեսնելը մեզ համար — եթէ որ մեզ մահ պատահի, վախով փրփալը մեր սիրելիների մեր ամեն մի շարժմունքների ամեն մէկը ուշադրութեամբ դիտելով ամենայն հանգամանքները, որ սովորաբար շրջապատում են մեռնողին, կեանքի այս վերջին բոպէն շատ դժուարացնում են: Այդ պատճառով Աստուած իւր զաւակներից մի քանիսին զրկումէ յանկարծ մահ: Ազատումէ նոցա անձամբ տխուր վկայ լինելուցը իրանից յետոյ մնացողների անպտուղ ու շատ անգամ՝ չտիկոյը դուրս ցաւիցը:

Մահը, իսկապէս ննջելը՝ դառը չէ: Մահը ինքն իրան ցաւ քաշել չէ ու չէ ևս կարող լինել, ինչու որ ամենայն ցաւերի վերջն է: Միայն հիւանդութիւնն է դառը բանը. բայց հիւանդութիւնը մահ չէ, մահին մօտեցնող է: Ում որ Աստուած յանկարծ այս աշխարհիցս կանչումէ, հիւանդութեան անկողնի նեղութիւններիցը ազատ է մնում: Նա մեռնումէ առանց մահ ճաշակելու: Իւր երկրաւոր ու երկնաւոր կեանքի մէջը հազիւ մի բոպէ կայ: Առանց հոգսի, առանց վախի, առանց ցուի այս անցաւոր կեանքիցս դէպի լաւագոյն ազնուագոյն վիճակն է գնում ինչպէս որ երազ տեսնող մարդը զարթնումէ ամեն բան պարզ տեսնելու:

Այո՛, յանկարծ պատահած մահը ես ոչ թէ Աստուծոյ պատիժ եմ համարում, այլ Նորա ամենագեղեցիկ բարերարութիւններից մէկը: Դորա համար ես կըսպասեմ նորան ոչ իբրեւ մի թշնամու, այլ իբրեւ մի բարեկամի, որ գալիս է ինձ տեսնելու աստուածային հայրական տան աւելի մի գեղեցիկ բնակարանը: Մահը մեզ դարհուրեցնող դե չէ, այլ լուսոյ հրեշտակ. նա չէ քանդում, այլ շինումէ, չէ խաւարեցնում իբրեւ անմխիթար մութ գիշեր, այլ պայծառացնումէ յաւիտենական փառքի համար: — Անվրդով սրբտով կըսպասեմ ես իմ վերջին ժամիս. թող գայ, հասնի, երբ էլ, որ և ինչ կերպով էլ որ Աստուծոյ հաճոյ է: Բայց առաջուանից էլ կըպատրաստուեմ մահուան իմ կեանքիս ամեն մի օրը, որ Տէրը ինձ արթուն գտնի, երբ որ գալու լինի: Ինձ համար էլ ստիպողական լինի այն յորդորը թէ՛ յի՛ խնայէր զղջսմբ՝ յիշեալ հիւանդանոցս: Այլ ոչ ոքից չեմ, պարտաւոր եմ, դեռ մեզի մէջ ընկնել կարող եմ:

(Թաք. Գ.)

Գ. Ե. Ա.

Զ Ա Տ Ի Կ

Ղազարոսի յարութիւնը. Յիսուսի հանգիստը մուտքը Երուսաղէմ. Հրէից մեծամեծների նախանձը. Բաղարշակիքը. Յիսուսի մատնութիւնը. Խաչը. Թաղումը եւ Յարութիւնը:

Մեծի պահոց ապաշխարութեան օրերից յետոյ՝ ինչպէս աշխարհը յարութիւն է առնում կենսաբեր գարնան գալով՝ ձմեռնային մեռելութիւնից, մարդիկ ևս ուրախանում ու զուարճանում են, որովհետեւ Յիսուսի Յարութեան Տօնը տօնելով, տօնում են և իւրանց յարութեան. որովհետեւ այս աշխարհային կեանքից յետոյ, մահուան ձմրան մէջ մի առժամանակ մնալով՝ յարութիւն առնելու են Յիսուսի թագաւորութեան մէջ յաւիտեան երջանիկ սպրելու համար՝ եթէ այդ կեանքին՝ այս աշխարհից պատրաստուել են առաքինի վարմունք ունենալով: Արարատի խմբագրութիւնը իւր ընթերցողին մեր ապագայ յարութեան առհաւատչեայ Յիսուսի Յարութիւնը շնորհաւորելով՝ իբրեւ մի պատշաճաւոր նուէր, առաջարկումէ կարգալ՝ Յիսուսի երկրաւոր կեանքի վերջին